



8573



5027



Արտատպուած «ԱՐԱՐԱՏ» ամսագրից
№ II. 1908 թ.

ՏԽՈՒՐ ՄԵՂԵԴԻՆԵՐ

(Հ. Հայճէ.—Աւ. Իսահակեան.—Շ. Կուրդիցեան).

Ա.

5458

«Երևասարգ Գերմանիայի» անդուգական երգիչը վաղուց է գրաւել էր մեր հայ բանաստեղծների ուշադրութիւնը և այս դէպքումն էլ, ինչպէս և շատ ուրիշ անգամներ, միջնորդի դերը, մեր և օտար հեղինակների միջև, կատարել է ռուսաց զբաղանութիւնը: 1859—1860 թուականների Современники ամսագրում տպուած են մի քանի թարգմանութիւններ Հայնէից, ի միջի այլոց և նրա «Երազը», որը թարգմանել է Մ. Նալբանդեանը և զետեղել շիւսիսափայլում: Այդ բանաստեղծութեան վերջաւորութիւնը փոփոխուած է, կարելի է ասել, հայացրած է, բայց մնացեալում «Երազը» շատ մօտ է բնագրին: Հայնէականութիւն մենք գրանում ենք շիւսիսափայլի մի ուրիշ աշխատակցի, Ս. Շահադիդի, ոտանաւորների մէջ ևս: Այդ ազդեցութիւնը հասկանալի կլինի լիովին, երբ մենք ի նկատի ունենանք, որ այդ միջոցին ռուսներն հրատարակութեամբ լոյս տեսաւ Հայնէի երգերի ռուսերէն թարգմանութիւնը: Ժամանակ անցնելուց յետոյ մի անյայտ հայ բանաստեղծ թարգմանում և առանձին գրքով հրատարակում է Հայնէի մի քանի բանաստեղծութիւնները, որոնց վերայ ժամանակին մեր մամուլը, ըստ սովորութեան, ոչ մի ուշադրութիւն չդարձրեց:

Մեր նորագոյն բանաստեղծութեան ռահվերայ Յ. Յովհաննիսեանը, յետոյ Ջ. Բալուդեանը, ապա և ուրիշները, քանիցս թարգմանում են Հայնէի գողտրիկ, բայց միշտ տխրալից, երգերից: Բայց և ոչ մէկի քնարը Lyrisches Intermezzo-ի եղանակի հետ ունիսօն չի կարողանում երգել՝ դրա համար հարկաւոր էր ուրիշ տեսակ տաղանդ, ուրիշ տեսակ տրամադրութիւն: Մեր երկտասարգ հայ բանաստեղծների սրտերին աւելի մօտիկ էին և հասկանալի Պլէշէէի բողոքող քնարը, Նադսոնի տխուր-տըրտում գանդատը: Աւելացնենք ի հարկէ և այն, որ գերմաներէնին չտիրապետելով—մենք չէինք կարող թարգմանութիւնների միջոցով իսկական գաղափար կազմել գերմանացի նոյնչափ ռօմանտիկ, որչափ և իրական բանաստեղծի մասին: Սա-

Տպարան Ա. Էջմիածնի

8573

կոյն ժամանակի ընթացքում մեղանում և ո սկսում են կարգալ
և սիրել իսկական Հայնէին, ոգևորուել նրանով, աղոթուել նրա-
նից՝ նրա հետ ծաղրել և հեգնել, նրա հետ արցունք թափել:

Վերջին ժամանակս, կարծես, մի տեսակ պահանջ կար Հայ-
նէի բանաստեղծութիւններէ հայերէն թարգմանութիւնը ունե-
նալու, որպէս զի ընթերցողների աւելի լայն շրջաններն էլ կարո-
ղանային ծանոթանալ այն հեղինակին, որի տնունը միշտ
կրկնում է, որի երգերը այնքան սրտաբուլիս են, որի սլաքները
այնքան թունաւոր: Եւ ահա Յակոբ Տէր Գէորգեանը թարգմա-
նում և հրատարակում է Հայնէի գլուխ գործոց Buch der
Lieder-ը *), հեղինակի պատկերով և լաւ կազմուած կենսագրա-
կան ակնարկով: Ի՞նչ ասենք թարգմանութեան մասին: Թէ
մանրամասն համեմատութիւնը բնագրի հետ և թէ ընդհանուր
տպաւորութիւնը այն է, որ թարգմանիչը ամեն կերպ աշխատել
է Հայնէի քաղցմանը առանց կողմնակի շեղումների և սեփա-
կոն յաւելումների, և շատ անգամ տուել է բաւականի գե-
ղեցիկ ոտանաւորներ, բայց դրանք Հայնէ չեն: Նա ուրիշ բան
է, ու ուրիշ բան ... Բանաստեղծութեան միտքը, գաղափարը
թարգմանիչը գրեթէ միշտ ճիշտ է ըմբռնել և արտայայտել,
բայց տպաւորութիւնը այն չի ստացւում, ինչ որ բնագրից կամ
միտքէ ամենայնիւ յաջող թարգմանութիւնից: Այն էլ պէտք
է ասել, որ թարգմանիչ լեզուն բաւականին աղքատ է և ան-
գոյն, տաղաչափութիւնը—շատ անկատար. կամ յանկն է պա-
կատ, կամ վանկը, կամ շէշտը տեղը չէ կամ ցեղութիւն:

Եւ այնու ամենայնիւ ես ողջունում եմ այս գործը, իբրեւ
առաջին փորձ, իբրեւ մի լուսնայ մեր աղքատիկ գրականու-
թեան դանձարանում, որը մինչև օրս զարգացել է և ապա-
գային էլ պիտի զարգանայ յատկապէս եւրոպական լաւագոյն
գրուածքների հովանու տակ:

Բ.

Ես արդէն ասացի, որ Հայնէի թարգմանը հանգիստանալու
համար, հարկաւոր է նախ և առաջ նոյն տրամադրութեամբ
ներշնչուել: Այդպիսի տրամադրութիւն ի վաղուց հետէ ցոյց է
տալիս մեր տաղանդաւոր բանաստեղծ Աւետիս Իսահակեանը,
որ նորերս կրկին հրատարակեց իր «Երգեր ու վերքեր»-ը **): Նա

*) Հայնէի Հայնէ, Երգերի Գիրքը, Գերմաներէնից Թարգմանեց Յա-
կոբ Տէր Գէորգեան. Բագու. 1907 թ. դինը 60 կողմեր:

**) Աւ. Իսահակեան՝ Երգեր ու վերքեր. Թիֆլ. 1908 թ. Գինը 1 ր.

ոչ միայն տրամադրուած է ձեռնարկ, այլ և որոշ շրջանում
գտնուած է եղել նրա աղբեցութեան տակ, վերցնելով նրա-
նից և ստանաւորների ձևերը և նրա սիրած բառերը: Շատ
անգամ Ա. Իսահակեանը վերցնում է Հայնէից իրան դուր եկած
ոտանաւորի առաջին տունը, առաջին նախադասութիւնը, և
յետոյ զարգացնում է իր ձեռով ու տալիս նրան նոր բովանդա-
կութիւն («Սիրս իմ, սպասիր», «Էս օր ձեռ տուն», «Շառայելով
մի վառ աստղիկ», «Մութ անտառով լուռ ման կուգամ»): Բայց
նա ստրկանալ չգիտէ, մանաւանդ որ Հայնէի բնաւորութեան
մի կողմը գրեթէ բոլորովին բացակայում է հայ բանաստեղծի
մէջ՝ այդ է հեգնութիւնը, ծաղրը, ամենաբշտիկ բոպէին կծու
ճշմարտութիւն ասելու պատրաստութիւնը: Մինչդեռ Հայնէն
ասում է.

Թոյն է կոթում իմ երգերից

Աւ. Իսահակեանը

Ախ, երգերս, իմ վերքերս ...

Երեսք, սրնաք սրտիս արնով ...

Անթափանցելի խաւարը և յուսահատական վիշտը հայ
բանաստեղծին մօտեցնում է Weltschmerz-ի (Տիեզերական վշտի)
երգիչներին, որոնք հին, շատ հին ժամանակներից ի վեր և
մինչև օրս հարստացնում են համամարդկային դրականութիւնը
և որոնց թուում գտնուում են և երեմիա *) մարդարէն և Սողո-
մոն իմաստունը, և դատական շրջանի եղբերագունները, և Բայ-
րընը, Լէօպոլդին, Լէնաունը ... Գա այն հոգեկան սգաւոր
դրութիւնն է, որին ենթակայ էր Ա. Իսահակեանը պոէմի հերոս—
Լեոնը՝

Իմ կեանքը ինձ բերդ դարձաւ

Չերահասաւ ու զիշեր.

Անոյ ժպիտը հոգուս փախաւ ...

Աւ. Իսահակեանի ամբողջ բանաստեղծութիւնը այդ տե-
սակ մի ողբ է՝ մռայլ, անյայտ, անմխիթաւ: Հայնէից յետոյ նա
իր «գարգերին» արձագանք գտնում է բնութեան դրկում և
ժողովրդի տրամադրութեան մէջ: Սաստիկ աղոթուած ժողո-
վրդի երգերից, որոնց մէջ հայի դարաւոր տանջանքներն են
տպաւորուել, — Աւ. Իսահակեանը յօրինում է (իսկ շատ
անգամ գրեթէ գրի է առնում) այնպիսի բուն ժողովրդական

*) Աւ. Իսահակեանի «Եղբայրութեան կամ Թէ սիրոյ» ոտանաւորի
«Անիծուիս մարդ, որ յոյս է մարդ» հէնց Երեմիայի ԺԵ. 5-ից է վեր-
ցրած «Անիծեալ լիցի մարդ, որ արասցէ գոյս իւր ի մարդ»:

լեզու, ձև և ոգի ունեցող բանաստեղծութիւններ, որոնց նըմանը մենք մեր գրականութեան մէջ չառ քիչ ունենք: Մեթէ հարկաւոր է օրինակներ բերել, օրինակներ—երբ որ նրանք այժմ բոլոր երգարանների ու դասագրքերի մէջն են մտել, երբ նրանք ամենուրեք երգուում են և խոր հառաչ են հանում թէ երգողների է թէ լսողների կրօնքը... Յիշեցէք նրա ամենագեղեցիկ բանաստեղծութիւնները՝ «Դարսըս լացիք», «Արագիկ», «Կրօնականները Եւրոպայում», «Մանկալ ես, բեգարած ես» և ուրիշները:

Բայց այստեղ էլ նա չի կարողանում ոչ միևնույն ժամանակ, ոչ բժշկուել իր «Վերքերից», ոչ էլ բացատրութիւն գտնել իր սիրտը մաշող Weltschmerz-ի: Նա դիմում է փիլիսոփայութեան, գուցէ Հարամանին և Շոպէնհաուէրին. բայց հաւաստեալ կարող ենք ասել, որ Նիցշէի շեշտակի փիլիսոփայութիւնը յափշտակում է յուսախաբ և յուսահատ հայ բանաստեղծին: Եւ Նիցշէականութիւնը (աւելի ճիշտն ասած նրա փիլիսոփայութեան մի կողմը) անհատականութեան ու անիշխանականութեան քարոզի հետ միասին գալիս են ձևակերպելու մուսլի երգչի աշխարհայեցողութիւնը: Այսպէս է առաջ եկել «Բադերը վայրի բռան օրաբաժն» ոտանաւորը, որի բնաբանը Նիցշէի լեզուով նախադասութիւնն է՝ «Մի գնա մարդկանց մօտ—գնա՛ անապատ գազանների մօտ», ուրիշ խօսքով՝ «Փախի մարդկանցից»: Մեր փուլ աշխարհը նրան չի գրաւում, նա պատրաստ է ամէն բոլոր թափ տալ թւերը և սոււառնել՝

Ձեր ձեր օրէնքից, բռնունքից դաժան
Իմ անհատական ոլորտս կուզեմ,
Ուր կամբքս լինի օրէնքս միայն...

Բնորոշ է մանաւանդ վերջին նախադասութիւնը և ոչ միայն անիշխանական հովերով տրամադրուածի այլ, և տու հասարակ հայ անհատականի համար:

Բայց գուցէ արդի մարդկութեան կարգերն են նրան ատելի. գուցէ կգայ ժամանակ, երբ մարդկութիւնը կփոխուի... Ոչ. նա այդ յոյսը չունի: Հէնց ինքը տիեզերքը և մարդկութիւնը կարծես աննպատակ առեղծուածներ են և

... «Կեանքն է երազ
Մեծ քրնի մէջ աշխարհի.
Մարդն է ոգի, մարդն է զօղանջ
Մեծ դանդի մէջ աշխարհի»...

Ահա կատարեալ յոռետեսութեան ներշնչում, որ չգիտես բուդդայականութիւն է, թէ մօզէն ոչնչականութիւն: Շատ կցաւիմ, որ այս նոր հրատարակութեան մէջ ոտանաւորները

ժամանակագրական կարգով չեն գետեղուած. այնու ամենայնիւ գուցէ չեմ սխալուի, եթէ ասեմ, որ սկզբում նրա երգերի լեյս մօտիւր (գերեշխօղ եղանակը)—անյաջող սիրուց բըղխած տխուր գանգատն էր. այդ են միմեջում՝ միալար և անվերջ նրա բոլոր «սիրոյ յուեր»-ը:

Յետոյ նա սկսում է զգալ, որ իր վերքերը

«... մեծ տիեզերքի հսկայ վերքերի
կաթիլներիցն են»...

Եւ այդ հանուր մարդկային թախիծը—դառնում է նրա յետագայ երգերի գլխաւոր մեղեդին:

Միայն իբրեւ վաղանցուկ հովեր մենք նրա երգերի մէջ գտնում ենք և անզուսպ կենսաբաղութեան—էպիկուրէիզմի—հետքեր (Մեղի եւ զղջման երգեր) և քաղաքացիական կամ յեղափոխական մօտիւններ (Ազատութեան գանգ, Անհուն վրեժի եւ ասելութեան, Գուցէ իմ հեծծանք):

Սարսափելի կլինէր, եթէ այս տանջուող և տառապող «արդերի ծով» սիրտը ոչ մի տեղ, ոչ մի բանում հանգիստ, դադար, յենարան չգտնէր: Մեթէ ոչ ոք, ոչ ոք նրան սիրոյ մի համբոյր տալու չէ, միևնույն կերպով մի խօսք ասելու չէ.

Եւրաբ դարդոտ, չոր գլուխս
Ուրտեղ պիտի քուն մըտնի...
Ախ, աչքերս ո՞վ պիտ ծածկէ...

Մայրը... ահա այն էակը, այդ, գուցէ միակը ամբողջ աշխարհում*), որբակից է իր դաւալին, նրան հասկանում, նրան միևնույն, անկեղծ սիրում և պաշտում: Եւ սոյն բանաստեղծութիւնների մէջ, ուր մօր մասին ու է յիշատակութիւն, ակնարկ կայ—չգիտես ո՞ր բանին աւելի դարմանաւ մայրական թէ որդիական սիրոյն, բանաստեղծի խոր և անկեղծ զգացմունքներն, որոնք այնպիսի սրտաշարժ լարեր են հնչեցնում, թէ նրա ընդունակութեանը այդպէս ճիշտ բնութիւնը և այդպէս նուրբ արտայայտել մօր հոգեբանութիւնը. («Սեւ միգրա», «Բիւլիս ունի», «Մայրիկ, հիւանդ եմ».)

Լսեցէք ինչպիսի վիշտ է լուռում այս խօսքերի մէջ

— «Որսկան աղբեր, սարէն կուգաս
Սարի մարտը կը փնտռես.
Աստ, ետրմը դուն չըտեսար
Իմ մարտըս, իմ բալէս.

*) Յիշեցէք ռուս բանաստեղծ Некрасов-ի «Внимая ужасам войны» ոտանաւորը:



Դարախ ձեռքէն սարերն ընկաւ
 Իմ արեւըս, իմ բալէս.
 Դըլուխն տաւ քարերն ընկաւ
 Իմ ծաղիկս, իմ լալէս ...

Կարծես Ա. Ահարոնեանի Մայրն է կանգնած Տերամօր պատկերի առաջ, որը նոյնպէս տխուր, նոյնպէս վշտակիր իր որդուն է ողբում: Այստեղ արձունքներ հարկաւոր չեն՝ այստեղ արեւնոտ սիրտն է խօսում դաշկացած դէմքի ամէն մի գծադրութեան մէջ:

Նոյն խորը զգացմունքներով կապուած է և որդին իր մօրը հետ (Տես «Մայրիկիս» ոտանաւորը):

Ախ քու տեսքին, անուշ լեզուին
 Գարօտցեր եմ, մայրիկ ջան,
 Երնէ՛կ, երնէ՛կ, երազ լինիմ,
 Թըռնիմ մօտըդ, մայրիկ ջան:

Երբ քունըդ գայ, լուռ գիշերով,
 Հոգիդ զըրկեմ, համբոյր տամ.
 Սրտիդ կըպնեմ վառ կարօտով
 Լամ ու խնդամ, մայրիկ ջան ...

«Անյոյս ու մենաւոր» բանաստեղծի հոգու խորքում մի ձայն է լսուում—դա «մօր քնքոյշ սուրբ սրտից ծորած» ձայնն է: Թող որ ուրիշների համար նրա երգերը «կեղծ և տգեղ, սառն և անշունչ» հնչիւններ լինին—այնչէ՛ք. բայց անգին և նաղելի մայրը հօ գիտէ, որ դրանք նրա «սիրած խեղճ որդու» ձածուկ ու դադանի արեւն արցունքներն են (Տես «Գուցէ իմ հեծածանք», թէպէտ և ամբողջի մէջ կեղծ նօտա է լսուում): Գուցէ այդ է պատճառը, որ յուսահատ բանաստեղծը դեռ չի փշրել իր քնարը: Դեռ կայ մի սիրտ, ուր արձագանք են գտնում նրա բոլոր դարձուց երգերն ու հառաչանքները: Եւ ոչ միայն քնարը, այլ գուցէ և իր կեանքը նա տար քարով ու սարով... Բայց ո՞վ պիտի սրբէ մօր արցունքները, ո՞վ պիտի մխիթարէ նրան ...

Ախ գլուխըս առնեմ, ընկնեմ սարերը,
 Զարնեմ քար-քար, զարնեմ քարէ-քար.
 Թող սիրտըս գիլու փայ-բաժին դառնայ,
 Մենակ թէ մէրբս մահրօ չիմանայ ...

Այդպէս տապալկուել սիրուց ու գարգից գիտէ միայն Ա. Իսահակեանը:

Գ.

Մեր կարծիքով Ա. Իսահակեանի թէ բանաստեղծական տաղանդը և թէ աշխարհայեցողութիւնը դեռ վերջնականապէս չեն կազմակերպուել. նրանք դեռ զարգացման պրոցեսի մէջ են գտնուում: Այնու ամենայնիւ արդէն իսկ նա իր դարձուց երգերով, յուսահատ աշխարհայեցողութիւնով, անկեղծ մտորումներով և բանաստեղծութիւնների բուն ժողովրդական ոգով՝ պատուաւոր տեղ է բռնում մեր քնարերգութեան մէջ: Նա եկաւ ու իր սեփական երգը երգեց ու երգեց այնպէս, ինչպէս մինչև նրա երեւալը այդ կարող էր երգել միայն բնութեան զաւակ հայ գիւղացին: Ահա ինքնուրոյն հայ բանաստեղծ, ասաց ընթերցողը...

Նա հէնց առաջին քայլափոխից գնաց այն շաւղով, որը բացել էր Յ. Յովհաննիսեանը, բայց յետոյ, կարծես, մոռացութեան էր տուել:

Ա. Իսահակեանի բնորի ազդեցութիւնը մեծ էր. նա իսկոյն ստեղծեց երկրպագուների և հետևողների մի ստուար շրջան: Բայց—ինչպէս միշտ—այդ հետևողները չունենալով իրանց ուսուցչի ոչ տաղանդը և ոչ աւելնը համը տարան իրանց «եառ»-ով, «գարդ»-ով, «ծովով-մովով» ու բանաստեղծական գեղեցկութիւնը շարմանկայ շինեցին ...

Բացառութիւն է կադմում մեր հորիզոնի վերայ երևացող նոր աստղը՝ տիկին Շուշանիկ Կուրդինեանը*), որը Ա. Իսահակեանի քնարից մեծապէս ազդուած լինելով հանդերձ (Տես նորա «Մի հոգեհանգիստ», «Բլբուլին», «Տրտունջ», «Մի լար իմ սիրտ», «Դօնի վերայ») — ցոյց է տալիս շնորհալի տաղանդ և բաւականաչափ ինքնուրոյնութիւն: Սա կովկասահայ գրականութեան մէջ առաջին և միակ կին-բանաստեղծուհին է և իր առաջին փորձերովն արդէն գալիս է որոշ տեղ բռնելու մեր գրականութեան մէջ, գուցէ մեր Ա.գա Նեգրին դառնալու: Աչքի է ընկնում նրա ոտանաւորների երաժշտականութիւնը, որը այնքան հաղուադիւտ է մեր մէջ. ահա մի կտոր նրա գողարիկ Տրտունջ ոտանաւորից՝

Իսկ ես հեզ, փրփրալէզ ծովի մէջ
 Պիտ լողամ ու դողամ մինչև լոյս.
 Մինչ ծագի նոր այգի լուսաւջ
 Վառ արփին սև ափին արշալոյս.—

Այսպէս գիտեն երգել մեր միջնագարեան բանաստեղծ-

*) Շ. Կուրդինեան. Արշալոյսի ղողանջներ. Ա. պրակ. 1907 թ. Գ. 50 Կ.

ները, իսկ նորերից մեայն Դուրեանը՝ այսպիսի քաղցրահնչուն տաղերից չէին հրաժարուի նոյն իսկ Վէրլէնը ու Բալմօնարը:

Գնահատելի է բանաստեղծուհու մէջ և այն, որ նա միակողմանի չէ: Այո՛, նա գիտէ և կօկէտութիւն անել (նա ու Գա) և անկեղծ սրտացաւ լինել (Բլբուլին): Նա չի քաշուած իր «խենթ-խելառ» սրտի չարածէի ցանկութիւններին էլ տեղ տալ իր ոտանաւորներին մէջ. միևնոյն ժամանակ նայեցէք ինչպիսի՛ր ըմբոստ երգերով նա գիտէ ճշմարտութիւն ասել, ինչպէ՛ս բաց ձակատով պաշտպան հանդիսանալ բոլոր զրկուած և տառապած աշխատաւորներին, ինչպիսի՛ր թափով հնչեցնել արշալոյսի զօղանջները և աւետել՝ այդ.

«... մենք ենք դալիս—

Դարևոր վշտի, զրկանքի բովից,

Հալածանքների, դարձ ստրկութեան

Մոռացուած խաւից—

Գրծքով փշրելու փառքը տիրողին,—

Գահը բռնութեան—ստրուկի շղթան,—

Նոր ուղի հարթել մեր նմաններին,

Արժանի կոչման—հաւաստութեան ... »:

Իր գրքոյկի մէջ նա մի քանի այսպիսի ուժեղ տեղեր ունի, ափսոս որ նշաններ են երևում, թէ նա կարող է—և բնի կամենալով՝ որոշ հարկ վճարած լինել ժամանակի ոգուն—կեղծ ճոռոմաբանութիւնների անդունդը ընկնել: Դրան ապացոյց «Այն-սեղ զնացեմ»-ի վերջին մասը, իր շինծու ոգևորութեամբ ու բռնազբօսիկ դարձուածներով:

Բանաստեղծը նախ և առաջ պէտք է անկեղծ լինի, որպէս զի ազգի ընթերցողի վերայ. իսկ կեղծիքը (Փալշ) . . . passer moi le mot, իշու աղանջներ ունի, որոնք ինչով էլ որ ծածկես, տակից կցցուին:

«Լաւ է Զատիկ, քան զնաւահատիկ» ու փոխանակ «սօցիալիզմի» մասին ճառեր ասելու.

Արի, բլբուլ, ցաւը երգենք

Վարդի, աւեր վաթանի,


Արի, աղբէր, իրար խառնենք

Մոմուռ ցաւը մեր սրտի ...

Եւ թող այդ երգի մէջ արձագանք գտնեն և մատող կուսի բնոյ վիշտը և բունաւեր գիւղացու լաց ու կոծը, և «Ստրուկի շղթան փշրել ուղողի» սարսափելի անէծքը և անվհեր մարտիրոսի անշուք հողակոյտի վերայ ողորմի ասող քամու ձայնը . . .

Աշնանային այս ցուրտ օրերին անկեղծ, թէպէտ և ախուր, երգը, կտաքացնէ մեր կոշտ սրտերը, կթեթեացնէ մեր անհուն դարդերը և վառ կպահէ մեր ներսի հաւատը՝ թէ մօտ է արշալոյս:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ.



ՄՀ Հայագիտական գրադարան



MAL008432

